ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 օգոստոսի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

117
(2597)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 75



«Պատերազմից կարելի էր խուսափել, եթե հայկական կողմը համաձայներ Ադրբեջանին հանձնել յոթ շրջանները՝ներառյալ Շուշին»,- սա հատված է վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 44-օրյա պատերազմից անմիջապես հետո՝ նոյեմբերի 16-ին արած հայտարարությունից: Այս հայտարարությունից հետո՝ մոտ մեկ տարի անց՝ հոկտեմբերի 4-ին՝ Լիտվայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, նա վերահաստատել էր Շուշիի մասին նախկին արած հայտարարությունն ու հայտարարել. ««Միշտ էլ Շուշիի հարցը եղել է, որովհետեւ Ադրբեջանը երբեք չի հրաժարվել էն մտքից, որ Ղարաբաղի ադրբեջանցիները պիտի վերադառնան եւ բնակվեն Ղարաբաղում: Հայկական կողմն էլ էր ընդունել, որ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցիները պետք է մասնակցեն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի համար անցկացվելիք հանրաքվեին՝ որպես Լեռնային Ղարաբաղի բնակիչ: Բա Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի բնակիչները որտե՞ղ էին բնակվելու: Բնակիչ նշանակում է բնակության տեղ ունեցող, չէ՞: Որտե՞ղ էին բնակվելու. տրամաբանորեն այնտեղ, որտեղ բնակվել են, եթե նրանք էդտեղ բնակված լինելու հանգամանքով են այդ կարգավիճակը ստանում»:

Այս հայտարարությունից անմիջապես հետո այն ժամանակ Արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Աննա Նաղդալյանը հակադարձել էր Փաշինյանին՝ հայտնելով, որ խաղաղ գործընթացի որեւէ փուլում Շուշի քաղաքի հարցը չի դրվել:

Փաշինյանին նոյեմբերի 17-ին հակադարձել էր նաեւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը՝ նշելով՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին հոկտեմբերի 2-րդ կեսին հաջողվել էր համոզել դադարեցնել ռազմական գործողությունները՝ պայմանով, որ իրականացվի փախստականների վերադարձ, այդ թվում՝ Շուշի: Ըստ այդ պայմանավորվածության՝ թեեւ փախստականները կարող էին վերադառնալ շուշի, բայց Շուշին Արցախի կազմում էր մնալու: Փաշինյանը, սակայն, դեմ է արտահայտվել այդ մտքին՝ պնդելով, որ դա կվտանգի հայկական կողմի շահերը: «Ենթադրվում էր, որ խաղաղ բնակիչները կվերադառնան Շուշի, հայկական կողմը պահպանում էր վերահսկողությունը Ղարաբաղի տարածքի այդ մասի նկատմամբ՝ ներառյալ Շուշին, եւ նկատի ունենալով մեր խաղաղապահների առկայությունը, իսկ մենք արդեն այդ ժամանակ պայմանավորվել էինք Հայաստանի եւ Ադրբեջանի հետ»,- մանրամասնել էր ՌԴ նախագահը:

Այսինքն՝ Փաշինյանի պնդումը, թե մինչ պատերազմը Ադրբեջանը պահանջել էր յոթ շրջանները եւ Շուշին, սխալ է, քանի որ, ինչպես հայտարարել էին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ու ԱԳՆ մամուլի քարտուղար Աննա Նաղդալյանը, բանակցությունների ընթացքում Շուշին հանձնելու որեւէ տարբերակ չի քննարկվել: Ստացվում է՝ Փաշինյանը, Շուշիի հանձնումը դիտարկելով որպես բանակցային գործընթացի անքակտելի մաս, հերթական անգամ ստել է:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները չեն կարող իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունել կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնել: Համենայնդեպս կառավարությունը էլի նոր նախագիծ է ներկայացրել եւ այդպիսի դրույթ է սահմանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում: Օրենքում դրույթ կամրագրվի, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պետք է ապահովեն, որ իրենց ընտանիքի անդամները եւ իրենց հետ փոխկապակցված այլ անձինք չընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի պաշտոնեական պարտականությունների կատարման եւ ստացված նվերի միջեւ: Ընդ որում՝ «Ժողովուրդ» օրաթերթը նախագծից տեղեկացավ, որ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի, կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաեւ արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որեւէ այլ ձեւով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետեւանքով անձը ստանում է օգուտ կամ առավելություն: Հիմա հետաքրքիր է՝ ինչ են անելու հեղափոխական իշխանիկները, որոնք անգամ շոր հագնելու խնդիր ունեին, իսկ հիմա բրենդային ապրանքանիշներից են միայն օգտվում:



Առաջիկայում Պաշտպանության նախարարության նախկին պաշտոնատար անձանց դեմ հարուցված քրեական գործով հետաքրքիր զարգացումներ են սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատարանից այս օրերին զանգահարել են ՊՆ նախկին պաշտոնատար անձանց փաստաբաններին եւ հայտնել, որ որոշումը կայացված է, եւ Հակակոռուպցիոն կոմիտեն է քննելու պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ մյուս պաշտոնատար անձանց քրեական վարույթը: Կալանքի տակ գտնվող ՋՈՒ պաշտոնատար անձինք սպասում են, թե Հակակոռուպցիոն կոմիտեն որ նորանշանակ դատավորին է մակագրելու քրեական գործը: Այս իրավիճակին զուգահեռ՝ Երեւանի «Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում կալանքի տակ գտնվող ՋՈՒ գլխավոր շտաբի նախկին պետի տեղակալ Ստեփան Գալստյանը դիմել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Կամո Մանուկյանին՝ խնդրելով իրեն տեղափոխել հիվանդանոց առողջական խնդրի հետ կապված հետազոտման ենթարկելու: Անցել է 1,5 ամիս, սակայն ՊՈԱԿ-ը որեւէ կերպ չի արձագանքել Ստեփան Գալստյանի նամակին: Անթույլատրելի վարքագիծ: Հիշեցնենք, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռքբերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների, մասնավորապես՝ անորակ, անպիտան հրթիռներ ձեռք բերելու վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ՋՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին. Գալստյանը, սակայն, ազատության մեջ է:



ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մտադիր է օրենսդրորեն կարգավորել զբոսաշրջության ոլորտը: Ավելին՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածներ խախտելու դեպքում կնշանակվեն մեծ տուգանքներ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ զբոսաշրջային օպերատորը եւ զբոսաշրջային գործակալը զբոսաշրջային փաթեթը սպառողին ուղղակիորեն վաճառելու դեպքում պետք է կնքեն օրենքին եւ ՀՀ կառավարության հաստատած օրինակելի պայմանագրին համապատասխանող պայմանագիր: Սպառողի հետ զբոսաշրջային օպերատորի եւ զբոսաշրջային գործակալի պայմանագիրը պետք է պարունակի հետեւյալ պարտադիր դրույթները՝ զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, որակավորման կարգը, հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը, ժամանման երկրում կամ վայրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը, տեսակը, սննդի կազմակերպման եւ մատուցման հաճախականությունը, պայմանները, որակավորման կարգը: Այս պահանջները խախտելու դեպքում կնշանակվի տուգանք՝ 300 հազար դրամի չափով: Բացի այս, մեզ հայտնի դարձավ, որ հյուրանոցային ծառայություն մատուցող անձը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում հյուրի գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար՝ բացառությամբ հյուրի այն դրամի, այլ արժութային արժեքների, արժեթղթերի եւ այլ թանկարժեք գույքի կորստի համար, որոնք հյուրը պահել է իր վերահսկողության տակ: Պահանջները խախտելու դեպքում տուգանքի չափը կկազմի 200 հազար դրամ:

ՎՏԱՆԳՎԱԾ ԵՆՔ

ԱՅՍՕՐ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՉ ԹԵ ՆՎԱՃՈՒՄ

Գերագույն խորհրդի նախկին պատգամավոր, Սփյուռքի նախկին նախարար Հրանուշ Հակոբյանը երեկ՝ օգոստոսի 23-ին՝ Անկախության հռչակագրի ընդունման օրվա կապակցությամբ տեղի ունեցած հանդիսավոր արարողությանը խոր մտահոգության զգացողությամբ էր մասնակցում: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հակոբյանն անկեղծանում է՝ տխուր եմ, որովհետեւ մեր երկրի անվտանգության հետ կապված հարցերը նպաստավոր վիճակում չեն, երկրում տիրող իրավիճակը ծանր է:

-Տիկին Հակոբյան, տարիների բովից ինչպե՞ս եք հիշում 1990-ի օգոստոսի 23-ը:

-Խանդավառություն, ոգեւորություն, ամբողջ ազգը փողոցում էր: Բոլորն էին հասկանում, որ սկսում է նոր պետության կառուցումը: Դահլիճը եւ փողոցն ասես մեկ էին դարձել: Ամեն տարի մենք Անկախության հռչակագրի ընդունման օրը՝ օգոստոսի 23-ին, հավաքվում էինք: Կազմակերպիչները, որպես կանոն, Աժ նախկին նախագահ Գալուստ Սահակյանն ու ԳԽ պատգամավոր Պարույր Հայրիկյանն էին: ՀՀ նորանկախ պատմության մեջ օգոստոսի 23-ը խիստ խորհրդանշանակալի օր է, բայց, ցավոք, այսօր մեր պետականությունը վտանգված է: Թշնամին մեր սահմանների մեջ է, բայց, արի ու տես, այսօր մենք կորցնում ենք, ոչ թե նվաճում: Անցած տարիների ընթացքում պետություն, պետական կառավարման համակարգ ստեղծեցինք, ու այդ ամենը՝ զրոյից, բայց հիմնովին ու ամբողջապես: Ստեղծեցինք բանկային, հարկային, մաքսային համակարգերը: Այս 1990-1995 թթ. Գերագույն խորհուրդն ամենաազգային պառլամենտն էր, քանի որ այդտեղ դրվեցին պետականության հիմքերը հայոց: Այդ ժամանակ էր, որ տեղի ունեցավ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանումը: Այս պառլամենտն էր, որ Եվրոպական ազատական շուկայական հարաբերությունների մասին որոշում ընդունեց, Սահմանադրություն գրելու համար հանձնաժողով մշակեց, ինչն էլ հետագայում թույլ տվեց խոսքի, մամուլի, խղճի ազատության մասին օրենքներ մշակել, ինչպես նաեւ միակուսակցական համակարգից բազմակուսակցական համակարգի անցում կատարել: Ահա այս ամենով սկսեց ազատ պետության ստեղծումը: Այս օրն էր, որ ծածանվեց մեր անկախության եռագույնը:

-Տիկին Հակոբյան, բոլորը խոսում են այսօր պետականության կորստի մասին, հայրենիքին սպառնացող բոլոր վտանգների մասին, եւ տպավորություն է, որ բոլորը միայն խոսում են կամ Facebook-ում հրապարակումներ տեղադրում: Ձեր տպավորությունները ինչպիսի՞ն են, իրական, գործնական քայլերի պակաս արդյոք չկա՞:

- Յուրաքանչյուրն իր տեղում, իր դերում փորձում է աշխատել, բայց բոլոր դեպքերում ժողովրդի խոսքն է վճռական: Այո, անհատները, տարբեր կառույցներ, կուսակցությունները, իհարկե, կարող են իրենց գաղափարներով եւ սկզբունքներով որոշակիորեն կողմնորոշել մարդկանց, բայց բոլոր դեպքերում այստեղ վճռական խոսքը ժողովրդինն է: Ժողովուրդը ինչպես որոշեց, այդպես էլ կլինի, իսկ ժողովուրդը, կարծում եմ, պետք է հասկանա՝ վտանգված ենք, Հայաստան պետությունը պետք է փորձենք փրկել թշնամու ձեռքից:

- 44-օրյա աղետաբեր պատերազմից հետո Դուք գրեթե չեք խոսել: Ի՞նչ է արել ՀՀ իշխանությունը մոտ երկու տարվա ընթացքում, որ Հայաստանը ոտքի կանգնի:

-Եթե Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը ճիշտ է, ու մենք 5 միլիարդ զենք ենք թողել ադրբեջանցիներին, ապա բանակն ուշքի բերելու ու մեր սահմանները պաշտպանելու համար պետք է նույն քանակի զենք գնենք: Բանակի համար, բանակի գեներալների համար, սպայական կազմի, զինվորների համար բոլորս, ամբողջ հայ ազգը պետք է աշխատի: 30 տարի Ադրբեջանը սարսափել է մեր բանակից, ու հիմա էլ պետք է հասնենք նրան, որ նորից սարսափի, այլապես այսօր թշնամին թափանցել է երկրի տարածքի խորքը: Ցավով եմ տեսնում մեր հայրենակիցների այրվող տները: Ես իսկապես տեսնում եմ թուրք-ադրբեջանական տանդեմի ուժեղացումն ու Հայաստանի թուլացումը: Այս առնչությամբ կարծում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը, ամբողջ հայ ժողովուրդը, որի մասին մենք այդքան խոսում ենք, ինչպես նաեւ սփյուռքը, Հայաստանն ու Արցախը պետք է միավորվեն եւ ուժեղանան: Հենց դա թույլ կտա մեզ դուրս գալ ստեղծված վիճակից:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՍՏՈՒԳՎԵԼ ԵՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Մասիս քաղաքի ավագանու նախկին անդամ Էդգար Մարգարյանը, որը օգոստոսի 19-ին ինքնասպան եղավ քաղաքապետարանում, հայտնվել էր իրավապահների տեսադաշտում: Այս դեպքից ամիսներ առաջ իրավապահները մեկ քրեական վարույթի շրջանակներում խուզարկություն են իրականացրել Էդգար Մարգարյանի տանը:

Ասել է թե՝ քրեական վարույթի շրջանակներում ստուգվում են բոլոր հանգամանքները, թե ինչը կարող էր դրդել նրան գնալ այդ քայլին:

Հիշեցնենք, որ վերոնշյալ օրը՝ ժամը 17:40-ին, Մասիս քաղաքի ավագանու նախկին անդամ Էդգար Մարգարյանը հայտնել է, թե խնդիր ունի նույն քաղաքի մի խումբ պաշտոնատար անձանց հետ՝ հավելելով, որ, հնարավոր է, քիչ հետո ինքը եւ 10 անձ մահանան: Նույն օրը՝ ժամը 21:20-ի սահմաններում, Մարգարյանը գնացել էր Մասիսի համայնքապետարանի վարչական շենք, ավտոմեքենան կայանել մուտքի դիմաց, մտնելով ներս՝ հրել է պահակին, հայհոյանքներ հնչեցնելով՝ բարձրացել է շենքի 4-րդ հարկ, որտեղից նռնակ է նետել դեպի դուրս եւ 2 անգամ կրակոց արձակել:

Ու մինչ իրավապահները բանակցում էին նրա հետ, Մասիսի համայնքապետարանի 4-րդ հարկում տեղակայված համայնքի ղեկավարի աշխատասենյակում հայտնաբերվել է 36-ամյա տղամարդու դին՝ գլխի քունքային հատվածում հրազենային մուտքային եւ ելքային վնասվածքով: Ասել է թե՝ նա ինքնասպան էր եղել:

Դեպքի վայրի զննությամբ համայնքապետարանի վարչական շենքի առջեւ գտնվող տարածքում հայտնաբերվել էր պայթյունի օջախ եւ բեկորային վնասվածքներով «Մազդա» եւ «Ռենո» մակնիշի ավտոմեքենաներ:

36-ամյա տղամարդուն ինքնասպանության հասցնելու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Առաջիկայում սպասվում է Նիկոլ Փաշինյան-Իլհամ Ալիեւ հերթական հանդիպումը: Հիշեցնենք, որ վերջին անգամ մայիսի 22-ին Բրյուսելում էր տեղի ունեցել Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Իլհամ Ալիեւի եռակողմ հանդիպումը, եւ, առհասարակ, վերջին մի քանի հանդիպումներն անցկացվել էին հենց Բրյուսելի նախաձեռնությամբ:

Վերջին հանդիպման ժամանակ համատեղ քննարկման արդյունքում պայմանավորվածություններ էին ձեռք բերվել տարածաշրջանային կոմունիկացիաների բացման աշխատանքների հետագա ընթացքի, սահմանների սահմանագծման ու անվտանգության հարցերով հանձնաժողովի աշխատանքների մեկնարկի վերաբերյալ: Սակայն հետաքրքիր է, որ այս անգամ հանդիպման վերաբերյալ անդամներ են առկա ռուսական կողմից: Մասնավորապես, ՌԴ ԱԳՆ տեղեկատվության եւ մամուլի դեպարտամենտի ղեկավարի տեղակալ Իվան Նեչաեւը վերջերս հայտարարել էր, որ մինչեւ օգոստոսի վերջ նախատեսվում են բարձր մակարդակի եռակողմ շփումներ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Նեչաեւը նաեւ ընդգծել էր, որ Մոսկվան հետեւում է տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին: Իսկ թե երբ կհանդիպեն երկու երկրների ղեկավարները, դեռ հայտնի չէ, սակայն հնարավոր հանդիպման մասին խոսել է նաեւ ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը:

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Երեկ՝ օգոստոսի 23-ին, Արցախի խորհրդարանական 5 ուժերի ներկայացուցիչներ հանդիպել են Արցախում խաղաղապահ առաքելություն իրականացնող ռուսական զորակազմի ղեկավարության հետ: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հանդիպման շարժառիթը Հայաստանի Հանրապետությունում ՌԴ դեսպանորդ-խորհրդական Մաքսիմ Սելեզնյովի՝ վերջերս արված հայտարարությունն էր, ինչպես նաեւ օգոստոսի սկզբին Ադրբեջանի կողմից հրադադարի հերթական խախտումն ու անվտանգային հարցերը:

Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Գալստյանը Armalur.am-ի հետ զրույցում փոխանցում է, որ ռուսական զորակազմի ներկայացուցիչներն իրենց վստահեցրել են՝ մինչեւ Լաչինի միջանցքի այլընտրանքային ճանապարհի շահագործումը խաղաղապահ զորքերի հսկողությամբ միջանցքն անարգել է գործելու:

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ

8000-ից 11000 ԱՄՆ դոլար. խմբի անդամներով կազմակերպել են անօրինական միգրացիա: Մեզ հայտնի դարձավ, որ Արայիկ Արասխանյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա մի խումբ անձանց անօրինական միգրացիան կազմակերպելու դիտավորությամբ նախնական համաձայնության է եկել Երեւան քաղաքի բանկիչ Կարեն Ենգոյանի հետ, որից հետո, պայմանավորվածության համաձայն, խմբի անդամներով, միմյանց գործողությունները փոխլրացնելով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից 8000-ից 11000 ԱՄՆ դոլար գումարներ ստանալու դիմաց 2022թ. հունվարի 1-ից մինչեւ մարտն ընկած ժամանակահատվածում վերջինների անվամբ խմբի կազմում օգտագործելու նպատակով պատրաստել են իրավունք վերապահող փաստաթղթեր հանդիսացող՝ աշխատավայրի, աշխատավարձի չափի, բանկային հաշիվներում առկա գումարների վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող տեղեկանքներ, ինչպես նաեւ ՌԴ քաղաքացու կեղծ անձնագրեր, որոնք այլ փաստաթղթերի հետ Մեքսիկայի Միացյալ Նահանգներ մուտքի պատշաճ թույլտվություն ստանալու նպատակով էլեկտրոնային եղանակով ներկայացվել են Ռուսաստանի Դաշնության տարածքում գործող Մեքսիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն, այդկերպ օտարերկրյա պետություններ մուտքի պատշաճ թույլտվություններ ստանալու համար կեղծ փաստաթղթեր ներկայացնելով՝ կազմակերպել են մի խումբ անձանց անօրինական միգրացիա: Վերոնշյալ անձանց մեղադրանք է առաջադրվել, նրանք գրավով ազատ են արձակվել, գործը դատարանում է:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵՑ

Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ, ԱԺ նախկին պատգամավոր Գեւորգ Պետրոսյանի եղբոր՝ Էդգար Պետրոսյանի եւ պարեկների միջադեպի գործով դատախազությունը ուշագրավ որոշում է կայացրել, ինչով պայմանավորված՝ այս պահին պարեկն իր փաստաբանի հետ ներկայացել է ՀՀ քննչական կոմիտե: Դատելով իրավիճակից՝ դատախազությունը պարեկի գործողություններին հակառակ որոշում է կայացրել, ինչը պատճառ է հանդիսացել, որ նրանք ներկայանան ՀՀ քննչական կոմիտե: Իսկ թե ինչ տեղի կունենա կոմիտեում, հետեւենք զարգացումներին:

«Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր, որ պարեկներն ու դատախազը վերջերս առերես հարցաքննվել են, եւ ամեն մեկն իր խոսքն է առաջ տարել: Հիմա գնդակը Քննչական կոմիտեի դաշտում է: Մեզ հասած լուրերի համաձայն՝ այս պահին նախաքննական մարմինը հակված է մեղադրանք առաջադրել պարեկին: Ինչպես հայտնի է, հուլիսի 8-ին նախկին պատգամավորի դատախազ եղբայրը՝ Էդգար Պետրոսյանը, պարեկների հետ բախվել էր: Պարեկները պնդում են, որ դատախազը հայհոյանքներ է հնչեցրել, բռնություն է կիրառել, այդ պատճառով են իրենք դատախազին բռնությամբ ձերբակալել: Համացանցում տարածվեց տեսանյութ, որտեղ Էդգար Պետրոսյանը, իր տան բակում կանգնած, զրուցում է, եւ պարեկները, արցունքաբեր գազ կիրառելով, նրան ձերբակալում են, իսկ ավելի ուշ՝ ազատ արձակում: Այս դեպքով քրեական վարույթ է նախաձեռնվել, եւ գործը հասել է մեղադրանքի փուլին:

ՈՒՇԱԳՐԱՎ ԴԵՊՔ

Երեկ՝ օգոստոսի 23-ին, ուշագրավ դեպք է տեղի ունեցել Աջափնյակ վարչական շրջանում: Բաշինջաղյան փողոցի 1 նրբանցքի հասցեի բնակիչներից մեկը զանգել է իրավապահներին եւ հայտնել, որ հայրը՝ Ա. Վ.-ն, դուրս է եկել տանից, եւ որեւէ տեղեկություն չունեն նրա մասին:

Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ նա իրավապահներին հայտնել է, որ հայրը գտնվում է դեպրեսիվ վիճակում ու տանը թողել է գրություն: Ավելի ուշ իրավապահները մեկնել են դեպքի վայր եւ հայտնաբերել են շենքի դիմաց գտնվող ավտոտնակում Ա.Վ.-ի դին՝ պարանով կախված:

ՍՊԱՆԵԼ ԵՆ ԵՎ ԱՅՐԵԼ

ArmLur.am-ը գրել էր, որ երկու օր առաջ ուշագրավ դեպք էր եղել Տավուշի մարզի Իջեւան քաղաքում: Իջեւան քաղաքի ճանապարհի եզրին՝ դաշտի մեջ, գտել են 1999թ.-ի ծնված տղամարդու այրված դի: Պարզվել է, որ այրված անձը Ս. Ղազարյանն է:

Երեկ այս առեղծվածային դեպքով արդեն իրավապահները դուրս են եկել հետքի վրա: Նախնական վարկածով՝ երիտասարդ տղային սպանել են եւ այրել: Ավելին՝ անգամ ենթադրյալ այս գործողությունները կատարելու կասկածանքով կա ձերբակալված անձ: Ի դեպ, ըստ մեզ հասած տեղեկությունների՝նախնական վարկածով երիտասարդ տղային սպանել են ու այրել պարտք ու պահանջի հետ կապված առաջացած տարաձայնությունների հետեւանքով:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՄԻԱՅՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ Սուրեն Պետրոսյանը երկու շաբաթ գտնվել է Բերձորում, փորձել ինքնաղաշտանություն կազմակերպել եւ Երեւան է վերադարձել միայն օգոստոսի 21-ին: ArmLur.am-ի հետ զրույցում նա անդրադարձավ իր նախաձեռնությանը, չհաջողելու դատճառներին եւ ներկա իրավիճակին:

Սուրեն Պետրոսյանի խոսքով՝ խնդիրն այն է, որ այժմ ընդդիմադիր ուժերը միայն հայտարարություններ են անում, բայց ոչ՝ գործ. «Անխտիր բոլորն անում են կոչ ու դատապարտող հայտարարություններ, բայց մենք մինչեւ այսօր չհասկացանք, որ խնդիրը Երեւանում արդեն չի լուծվում: Երկու տարի ժամանակ ունեինք. լուծվե՞ց Երեւանում խնդիրը, թե՞ չլուծվեց» , - նկատում է նա:

Կուսակցության ղեկավարը նշում է՝ վերջին օրերին Աղավնո են այցելած եղել բազմաթիվ պատգամավորներ թե՛ Արցախի խորհրդարանի, թե՛ Հայաստանի ընդդիմադիր խմբակցություններից, սակայն նրա առաջարկին չեն հետեւել. «Ես ամենայն պատասխանատվությամբ ասում եմ՝ իշխանության եւ ընդդիմության համատեղ ջանքերով համակարգված ձեւով Արցախը հանձնվում է»:

Սուրեն Պետրոսյանը զարմացած է, որ հայաստանյան ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչների կողմից աջակցություն չի ստացել: «Ցավոք, որեւէ մեկի կողմից չեղավ որեւէ արձագանք, շատերը եկան, գնացին, սակայն չարձագանքեցին, չասացին՝ ինչ կազմակերպել ենք, արկածախնդրություն է եւ այլն», - շարունակում է նա:

Աղավնոյում երկու շաբաթ մնացած Սուրեն Պետրոսյանը նշում է՝ բոլորը գնացին եւ ետ չվերադարձան: «Իշխանությունը եւ ընդդիմությունը համակարգված ձեւով հանձնում է Արցախը: Ընդդիրմութունն ասում է, թե Արցախը համակարգային արժեք է, սակայն ոչինչ չեն անում, եւ միայն խոսքեր են», - եզրափակեց նա:

Հավելենք, որ երեկ կայացել է Արցախի խորհրդարանական հինգ ուժերի ղեկավարների հանդիպումը Ռուսաստանի խաղաղապահ զորակազմի ղեկավարության հետ:

Ինչպես նշված է Արցախի խորհրդարանի հաղորդագրությունում, «վերջին օրերին տարբեր լրատվամիջոցներով տարածվել է, որ ԱՀ Ազգային ժողովի խմբակցությունները դիմել են Արցախում տեղակայված ՌԴ խաղաղապահ ուժերի ղեկավարությանը հանդիպելու նպատակով. հանդիպման շարժառիթը ՀՀ-ում ՌԴ դեսպանորդ-խորհրդական Մաքսիմ Սելեզնյովի՝ վերջերս արված հայտարարությունն էր, ինչպես նաեւ օգոստոսի սկզբին Ադրբեջանի կողմից հրադադարի հերթական խախտումն ու անվտանգային հարցերը»:

Առավոտյան տեղի ունեցած հանդիպման ընթացքում վերոնշյալ հարցերի շուրջ ՌԴ խաղաղապահ զորակազմի պատասխանատուների կողմից տրվել են պարզաբանումներ: Մասնավորապես, ըստ հաղորդագրության, հղում կատարելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը, «նշվել է, որ նոր երթուղին ունենալու է նույն միջանցքի կարգավիճակը, եւ պահպանվելու են բոլոր անվտանգային բաղադրիչները՝ սկսած 5 կմ-ոց անվտանգային գոտուց մինչեւ ՌԴ խաղաղապահ ուժերի անցակետերի տեղակայում»:

«Անդրադառնալով վերջին իրադարձություններին՝ ՌԴ խաղաղապահ զորակազմի ղեկավար անձնակազմը նշել է, որ, օգոստոսյան դեպքերի հետ կապված, կատարել են անհրաժեշտ եզրահանգումներ, միաժամանակ վստահեցրել են, որ լրացուցիչ ջանքեր կգործադրեն ապագայում նմանօրինակ խախտումները կանխելու եւ մեր բնակչության պատշաճ անվտանգությունը ապահովելու համար»,- ասված է Արցախի խորհրդարանի հաղորդագրությունում:

Հայաստանում Ռուսաստանի դեսպանորդ-խորհրդական Մաքսիմ Սելեզնյովը մոտ մեկ շաբաթ առաջ «Ազատության» հետ զրույցում վստահեցրել էր, որ ռուս խաղաղապահները «ոչ մի սանտիմետր չեն տեղաշարժվի Լաչինի գործող միջանցքից, քանի դեռ նոր ճանապարհը չի շահագործվել»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանն Ասկերանի շրջանի Խանցք համայնքում մասնակցել է «Ապագա սերունդներ» բարեգործական հիմնադրամի միջոցներով կառուցված մանկապատանեկան մարզահրապարակի բացման հանդիսավոր արարողությանը: Երկրի ղեկավարն այցելել է նաեւ Խանցքի Սուրբ Հովհաննես եկեղեցի:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերի հանձնաժողովների հանդիպումը նախատեսված է մինչեւ օգոստոսի վերջ Մոսկվայում: Այս մասին հայտնել են ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գրասենյակից՝ հավելելով, որ ձեւավորված հարցերի առանձին օրակարգ այս պահին որոշված չէ:

ինչպես նաեւ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների նպաստառու երեխաներին հատկացվող միանվագ՝ 30 հազար ՀՀ դրամի չափով տրամադրվող դրամական օգնությունների վճարման գործընթացը սկսված է: Դրամական օգնությունը ստանալու համար անհրաժեշտ է ներկայանալ «Արցախբանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղեր անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Երեկ ընթացել է ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի խորհրդանշական նիստը: Այն կազմակերպել է Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը: Նա ներկայացրեց այն կազմակերպչական խնդիրները, որոնց նա հանդիպել է այս ընթացքում: Նա փորձել է հանդիպել նաեւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, սակայն չի ստացվել:

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն՝ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի եւ դպրության օրվա կապակցությամբ Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետեւանքով,

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՀՀ վարչապետը Նիկոլ Փաշինյանը օգոստոսի 25-ին աշխատանքային այցով կմեկնի Ղրղզստանի Հանրապետություն՝ մասնակցելու Եվրասիական տնտեսական միության միջկառավարական խորհրդի հերթական նիստին: Այս մասին հայտնեցին վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ «ՏԵԼԵԳՐԱՄ»-ՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերով քննության գլխավոր վարչությունում ավարտվել է կազմակերպված հանցավոր խմբի կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառության, փողերի լվացման դեմքի առթիվ հարուցված քրեական գործից անջատված մասով նախաքննությունը:

Քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են էական նշանակություն ունեցող հանգամանքներ, այդ թվում՝ թմրամիջոցների իրացման մեխանիզմը, հանցավոր խմբավորման անդամներից 9-ի ինքնությունը:

Քննությամբ ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ Երեւան քաղաքի 22-ամյա բնակչուհին 2020թ. ապրիլից մինչեւ 2022թ. հունվարը իր հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող 24-ամյա երիտասարդի հետ կազմակերպել եւ ղեկավարել է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր խմբավորում:

Վերջիններս «Տելեգրամ» հավելվածում ստեղծել են էջեր, որոնք կառավարել են ինչպես անձամբ, այնպես էլ խմբավորման մեջ ներգրավված մի շարք անձինք:

Նախաքննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու դիտավորությամբ, թմրամիջոցների վաճառքով զբաղվելու նպատակով «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծել են թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող «Ivery Organics» անվամբ էջ, դրա միջոցով իրականացրել թմրամիջոցների ապօրինի վաճառք՝ էջում տեղադրելով թմրամիջոցների տեսակների, որակական հատկանիշների եւ դրանց ձեռք բերման պայմանների վերաբերյալ տեղեկություններ պարունակող գովազդային լուսանկարներ:

Երիտասարդ զույգի կողմից ստեղծված եւ ղեկավարվող հանցավոր կազմակերպության մեջ ներառվել է նաեւ «Տելեգ-

րամ» հավելվածում «Tiin» անվամբ գրանցված անձը, ով պարտավորվել է տրամադրել «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց «Ivery Organics» էջի միջոցով վաճառելու նպատակով, ինչից հետո վաճառվող թմրամիջոցների մի մասը ձեռք են բերել նշված անձից:

Հանցավոր խմբավորման աշխատանքները հստակ իրականացնելու նպատակով կազմակերպիչները «Տելեգրամ» հավելվածում ստեղծել են Шмаб անվամբ խումբ, որտեղ խմբավորման ղեկավարները հանդես են եկել Босс եւ Rich անուններով՝ խմբում ընդգրկելով նաեւ Kali, Таня, Drake Carleone, PON, Ivoryoperator անվամբ էջերն ու խմբի՝ ինչպես անձը չպարզված, այնպես էլ հայտնի անդամներին, տեքստային եւ ձայնային հաղորդագրությունների միջոցով տվել են հստակ ցուցումներ աշխատանքները կազմակերպելու նպատակով:

Խմբի երեք անդամների կողմից Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում վարձակալած տանը կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է խոշոր չափերով՝ ընդհանուր 14,5 գրամ հաստատուն քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, զգալի չափերով՝ ընդհանուր 7,68 գրամ հաստատուն չոր քաշով «Տետրահիդրոկա-նաբինոլներ պարունակող բուսական խառնուրդ» տեսակի թմրամիջոց, իսկ հանցավոր կազմակերպության օպերատորներից մեկի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 0,56 գրամ հաստատուն չոր քաշով «Տետրահիդրոկաննաբինոլներ պարունակող բուսական խառնուրդ» տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, խմբավորման ղեկավարները, նպատակ ունենալով թաքցնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, իրական բնույթը, իրենց պատկանող եւ իրենց կողմից կառավարվող «Telegram» հեռահաղորդակցման հավելվածի Ivery Organics խանութ-հարթակի միջոցով վաճառվող թմրամիջոցը գնելու ցանկություն հայտնած անձանց առաջարկել են վճարումը կատարել Dashqoin տեսակի կրիպտոարժույթով, ինչի նպատակով վերջիններիս տրամադրել են հիմնականում մեկանգամյա օգտագործման հաշվեհամարներ, ուղղորդել նշված հաշվեհամարին գումար փոխանցելու նպատակով նամակագրության միջոցով կապ հաստատել «Telegram» հեռահաղորդակցման հավելվածում կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող Cryptoceller Armenia, Armbitcoinbot, ինչպես նաեւ այլ նմանատիպ հարթակների հետ, վերջիններիս ուղարկել իրենց պատվիրած թմրամիջոցի արժեքին համապատասխան ՀՀ դրամ գումարը եւ իրենց կողմից հաճախորդին տրամադրված՝ հիմնականում մեկանգամյա օգտագործման Dashqoin տեսակի կրիպտոարժույթի դրամապանակի հասցեն թմրամիջոցի համար նախատեսված գումարին համարժեք կրիպտոարժույթը դրան փոխանցելու նպատակով:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ հանցավոր խմբի երկու կազմակերպիչներին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, խմբավորման յոթ անդամներին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով:

ԻՆՉ Է ՎԻՃԱՐԿՈՒՄ

ՄԻՊ-Ը ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը երեկ դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով հանրային ծառայության առանձին տեսակների համար սահմանված՝ արհեստակցական միություններին եւ կրոնական կազմակերպություններին անդամակցության արգելքի սահմանադրականությունը:

Խոսքը վերաբերում է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասին, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ 1-ին մասի 8-րդ, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերին, որոնցով ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության մարմիններում ծառայողների, զինծառայողների, դատախազների, դատավորների եւ Սահմանադրական դատարանի դատավորների համար նախատեսվում է արհեստակցական միություններին անդամակցելու, ազգային անվտանգության մարմիններում ծառայողների համար՝ նաեւ կրոնական կազմակերպություններին անդամակցելու, իսկ զինծառայողների համար՝ կրոնական միավորում ստեղծելու բացարձակ արգելք:

Դիմումով, մասնավորապես, նշվում է, որ արհեստակցական միություններին անդամակցելու արգելքը չի բխում նշված ծառայության տեսակների բնույթից եւ զրկում է աշխատողներին իրենց իրավունքների կոլեկտիվ պաշտպանության կարեւորագույն միջոցից՝ հավաքվելով միավորումների ազատության բուն էությանը:

Նմանապես, Պաշտպանը վիճարկել է, որ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը եւ զինվորական ծառայությունն ինքնին անհամատեղելի չեն կրոնական կազմակերպությանն անդամակցելու կամ այն ստեղծելու իրավունքի հետ:

Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանը, դեռեւս 2020 թվականի փետրվարի 18-ի ՍԴՈ-1506 որոշմամբ, «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ ոստիկանության ծառայողի համար կրոնական կազմակերպությանն անդամակցելու արգելք սահմանելու մասով, ճանաչել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Հիմնվելով վերոնշյալ որոշման, ինչպես նաեւ միջազգային իրավական փաստաթղթերի դրույթների եւ միջազգային ատյանների արտահայտած դիրքորոշումների վերլուծության վրա՝ դիմումով արձանագրվել է, որ վկայակոչված նորմերի նախատեսումը հանգեցրել է վերոնշյալ անձանց կրոնի ազատության եւ միավորումների ազատության անհամաչափ սահմանափակման: Դիմումով Պաշտպանը վիճարկում է վկայակոչված նորմերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներին:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՋ Է ՏՎԵԼ ԿՅԱՆՔԻՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ օգոստոսի 22-ին ուշագրավ դեպք է եղել Վարդենիս քաղաքում: Քաղաքացի Ա. Դավթյանը փորձել է վերջ տալ կյանքին: Նա տանը խոհանոցային դանակի գործադրմամբ ինքնասպանություն է գործել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Դավթյանը դանակով հարվածել է իր կրծքավանդակին: Մեզ հայտնի դարձավ, որ տղամարդն ունեցել է առողջական լուրջ խնդիրներ:

Հավելենք, որ ինքնասպանություն գործած քաղաքացին 72 տարեկան է, ծնվել է 1950 թվականին:

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արսեն Տիտանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարը եւ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, ինչպես նաեւ նույն հոդվածի 2-րդ եւ 4-րդ մասերով կրելով պաշտոնեական պարտականություններ ստանձնելու դրությամբ գույքի, եկամուտների եւ շահերի, ինչպես նաեւ տարեկան հայտարարագիր լրացնելու եւ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու պարտականություն, 2020 թվականի սեպտեմբերի 9-ին Հանձնաժողով է ներկայացրել հայտարարելու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագիրը, իսկ 2021թ. ապրիլի 12-ին եւ 2022թ. մայիսի 26-ին՝ համապատասխանաբար 2020 եւ 2021թ. տարեկան հայտարարագրերը, որոնցում դիտավորությամբ թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալը, այն է՝ չի հայտարարագրել դեռեւս 2004 թ. ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն եւ կնոջը՝ Հայկուշ Պետրոսյանին պատկանող՝ Լոռու մարզի Օձուն 4-րդ փողոցի 59/1 հասցեում գտնվող, 0.142 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության առանձնապես խոշոր չափերով՝ 1.060.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով անշարժ գույքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրման:

Հայկուշ Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, 2008թ. Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Արսեն Տիտանյանի կինը, պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագրում գույքի եւ եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաեւ տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների եւ ծախսերի վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականությունը պատշաճ չի կատարել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել են հանցագործության 48 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔԱՂԱՔԱԿԱՆ 3 ՈՒԺԵԲՈՎ

2022թ. սեպտեմբերի 25-ին նշանակված են Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ: Հարություն Մանուչարյանը Բերդ քաղաքային համայնքը ղեկավարում է 2012 թվականից, Բերդ խոշորացված համայնքը՝ 2017-ից: ՔՊ-ական իշխանությունը ծրագիր է մշակել սեպտեմբերի 25-ին Հ. Մանուչարյանին հաղթելու համար, որի էությունը ընտրողների ձայները կուսակցությունների միջեւ փոշիացնելը եւ ընտրություններից հետո կոալիցիայով ավագանու թեկնածուների ցանկի առաջին համար, Բերդի միասնական սոցիալական ծառայության տնօրեն Վահրամ Սուքիասյանին խոշոր համայնքի ղեկավար ընտրելն է: Օգոստոսի 21-ին ավարտվել է Բերդ համայնքի ավագանու ընտրությունների համար թեկնածուների առաջադրման ժամկետը:

Տավուշի մարզի թիվ 38 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Աիդա Սարգսյանից տեղեկացա, որ Բերդ խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջին համարը Բերդի միասնական սոցալական ծառայության տնօրեն Վահրամ Սուքիասյանն է: «Արդարություն» կուսակցության եւ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծած դաշինքի՝ «Արժանապատիվ սերունդի» թեկնածուների ցանկը կգլխավորի Աշոտ Մելիքյանը, որը «Գազպրոմ Արմենիա» ընկերության հերթափոխի պետն է, նախկինում Բերդում գործող ձեռնոցների գործարանի հերթափոխի պետ է եղել: «Իմ հզոր համայնք» եւ Վահան Բաբայանի «Ռեֆորմիստների» կուսակցությունների կազմած դաշինքի ցուցակը ներկայացել է «Ջորավոր համայնք» անվանումով, որի նախընտրակյան ցուցակի առաջին համարը Հարություն Մանուչարյանն է:

Բերդի խոշորացված համայնքի ղեկավար Հ. Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել՝ Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին («Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) եւ 314-րդ մասին 1-ին մասերի հատկանիշներով («Պաշտոնեական կեղծիքը): Հ. Մանուչարյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: Հ. Մանուչարյանն անազատության մեջ է 2021 թվականի նոյեմբերի 9-ից: Սեպտեմբերի 2-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում նշանակված էր Բերդ խոշորացված համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանի դատավարության հերթական նիստը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎԵՐՍՏՈՒԳԵԼՈՒ ԵՆ

«ՓԵԹԱԿ»-ՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԵՆ

Երեկ «Փեթակ» առեւտրի կենտրոնը մի քանի օր փակ մնալուց հետո բացվեց, սակայն ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «Փեթակ» առեւտրի կենտրոնում այսօրվանից ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինը ստուգումներ է իրականացնելու: Այս թեմայի շուրջ ArmLur.am-ը զրուցեց Երեւանի տարածքային բաժնի տեխնիկական եւ հրդեհային անվտանգության բաժանմունքի պետ Կարեն Կարապետյանի հետ:

-Պարոն Կարապետյան, այս պահին ի՞նչ անելիքներ ունեք՝ «Փեթակ» առեւտրի կենտրոնի հետ կապված:

-«Փեթակ» առեւտրի կենտրոնում 2021 թվականի թվականին իրականացվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ եւ դիտարկումներ, որի արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տրվել է կարգադրագիր՝ համապատասխան ժամկետներով: Ներկա պահին, հաշվի առնելով նաեւ իրավիճակը, առաջնահերթության կարգով դիտարկում, հետազոտություն ենք նախատեսել կրկնակի ստուգման նպատակներով «Փեթակ» առեւտրի կենտրոնում՝ օգոստոսի 22-ից 25-ը ներառյալ: Տեղում կատարվելու է ուսումնասիրություն, պարզաբանումներ են տրվելու՝ նախկինում տրված կարգադրագրերի կետերի հետ կապված:

-Ի՞նչ խախտումներ են հայտնաբերվել: Կնշե՞ք մեկ-երկու օրինակ:

-Խախտումները հիմնականում նույնաբովանդակ են՝ առեւտրի կենտրոններին բնորոշ, հիմնականում հրդեհային ահազանգման, ծխահեռացման, ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի, արտաքին հրդեհաշիջման համակարգերի հետ կապված:

-Դուք նշեցիք՝ օգոստոսի 22-ից 25-ը ստուգումներ եք անցկացնելու. այդ օրերին առեւտրի կենտրոնը բա՞ց է լինելու:

-Առեւտրի կենտրոնն արդեն բացվել է, արդեն այսօր այցը նախատեսված է, որ իրականացվելու է:

-Պարոն Կարապետյան, Դուք նման պայթուցիկների պահեստներ հայտնաբերե՞լ եք «Փեթակ» առեւտրի կենտրոնում, ինչպես, օրինակ, «Սուրմալու»-ում:

-Ոչ, պայթուցիկների պահեստներ հայտնաբերված չեն, բոլորը առեւտրի կենտրոններ են, որտեղ եւ բնականաբար իրականացվում է առեւտուր եւ վաճառք: *Հ.Գ. «Փեթակ»-ի կողմից ճանապարհը կբացվի: Նշենք, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի կողմից ճանապարհը դեռ փակ է մնալու, քանի որ այնտեղ որոնողական աշխատանքներ եւ քննչական գործողություններ են իրականացվում: Մեզ հայտնի դարձավ, որ երեկ Քննչական կոմիտեն, Ոստիկանությունն ու ԱԻՆ-ը քննարկում են ունեցել եւ որոշել են «Փեթակ»-ի կողմից ճանապարհը բացել եւ երթեւեկությունն այդ հատվածում վերականգնել: Ավելին՝ ArmLur.am-ը տեղեկացավ, որ քննիչներն առարկել են «Սուրմալու»-ի հատվածով ճանապարհի բացումը: «Փեթակ» առեւտրի կենտրոնի տնտեսվարողները ArmLur.am-ին հայտնեցին, որ արդեն բացել են իրենց տաղավարները եւ սկսել են աշխատել:*

Զրուցեց ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ

ԿՈՉ Է ԱՐՎԵԼ

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՉՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի նախագահ Բաֆֆի Համբարյանը նամակով դիմել է ԱՄՆ Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի անդամներին՝ կոչ անելով հետաքննություն անցկացնել Բայդենի վարչակազմի կողմից Արցախի ժողովրդին մարդասիրական օգնություն չտրամադրելու վերաբերյալ, քանի որ վերջինս ենթարկվում է ագրեսիայի եւ էթնիկ զտումների, ինչպես նաեւ ունի սննդի, ջրի, վառելիքի ու կենսապահովման համար անհրաժեշտ այլ ռեսուրսների պակասություն:

Այս մասին հայտնում են ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի կենտրոնական գրասենյակից՝ նշելով, որ, հղում անելով «Արցախի հայերին սովամահ տեսնելու Ադրբեջանի կառավարության մտադրությանը», Համբարյանն ընդգծել է՝ «ամերիկյան վարչակազմը Արցախում ապրող հայ ընտանիքներին մարդասիրական օգնություն գրեթե չի ուղարկել»: Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի նախագահը նաեւ նկատել է. «Ամերիկան չպետք է մեղսակից լինի Ադրբեջանի կողմից Արցախի հայ բնակչության էթնիկ զտմանը»:

Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի գրությամբ ամերիկյան օրենսդիրներից պահանջվում է պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եւ Միջազգային զարգացման ամերիկյան գործակալության ղեկավար Սամանթա Փաուերի միջոցով Բայդենի վարչակազմից ստանալ հետեւյալ չորս հարցերի պատասխանները.

- ի՞նչ կոնկրետ գործողություններ է ձեռնարկել Բայդենի վարչակազմը Լեռնային Ղարաբաղում ապրող եւ վտանգի տակ գտնվող հայերին օգնելու համար (ծրագրերի տրամադրում, գործընկերների տվյալներ, բյուջե, ապրանքներ եւ համապատասխան այլ տեղեկատվություն),
- ի՞նչ կոնկրետ ծրագրեր ունի Բայդենի վարչակազմը՝ օգնելու Լեռնային Ղարաբաղում ապրող եւ վտանգի տակ գտնվող հայերին (ծրագրեր, գործընկերների տվյալներ, բյուջե, ապրանքներ եւ համապատասխան այլ տեղեկատվություն),
- արդյոք Բայդենի վարչակազմն իրականացրե՞լ է հումանիտար ճգնաժամում գտնվող Արցախի հայ բնակչության կարիքների գնահատում,
- Բայդենի վարչակազմը բյուջեի ի՞նչ ծավալ է համարում բավարար եւ նպատակահարմար Արցախի հայ բնակչության առջեւ ծառացած հումանիտար ճգնաժամը լուծելու համար:

Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի համակիրները, օգտագործելով հանձնախմբի ինտերնետային կայքի հնարավորությունները, տասնյակ հազարավոր նամակներ են ուղարկել իրենց շրջանների օրենսդիրներին՝ պահանջելով ամերիկյան օժանդակություն տրամադրել Արցախին:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(1)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (նախնական փուլ)՝ 2022 թ. օգոստոսի 27- ին՝ժամը 11:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի վարչական շենքում տեղի կունենան «ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Շողակնի տուֆի երեւակումում 2022-2023 թթ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրությունների տեղամասի ընդլայնման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Փաստաթղթերի փաթեթին կարելի է ծանոթանալ համայնքապետարանում եւ ընկերության գրասենյակում՝ ՀՀ ք. Երեւան, Ամիրյան 20, Հայաստան: Հարցերի դեպքում զանգահարել 094059293, 095300097 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(2)

Ես՝ Նունե Պետրոսյանս, կորցրել եմ փաստաթուղթ՝ դիպլոմս, ՃՇՀԱՀ 2015-2019թ: Կոդ՝AB N260300 գր5799: Գտնելու դեպքում խնդրում եմ զանգահարել տվյալ հեռախոսահամարով՝093198994:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(3)

Կորել է Գոհար Ալբերտի Հարությունյանի ավարտական դիպլոմը: Տվյալներ՝ Երեւանի Ն. Օստրովսկու անվան մանկավարժական ուսումնարան: Դիպլոմի համար՝-MT-I № 235050: Գտնողին խնդրում ենք արձագանքել +374 94 783255 հեռախոսահամարով:

ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Շուռնուխ բնակավայրում նոր թաղամասի կառուցման ծրագրի վերահսկողության նպատակով Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը եւ քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչության պետ Արսեն Միրզոյանն օրերս աշխատանքային այցով եղել են Սյունիքի մարզում: Այցի ընթացքում դիտարկվել են կատարված շինարարական աշխատանքները: Արձանագրվել է, որ բնակելի 13 տուն ներառող թաղամասի 9 տան կառուցման աշխատանքները մոտենում են ավարտին, իսկ 4-ինն ընթացքի մեջ են: Մեկնարկել են նաեւ տների ներքին հարդարման աշխատանքները: Բացի այդ, կառուցվել է թաղամասի նոր ճանապարհի պաստառը, մեկնարկել են ինժեներական ենթակառուցվածքների եւ պարիսպների կառուցման աշխատանքները: Նոր թաղամասում նախատեսվում է կառուցել կոյուղու համակարգ՝ մաքրման կայանով, արտաքին էլեկտրամատակարարման հաղորդագիծ ու արտաքին լուսավորության համակարգ, ինչպես նաեւ յուրաքանչյուր տնատիրության համար կառուցել անասնագոմ, պարսպապատել ու ցանկապատել հողամասը: Հիշեցնենք, որ Գորիս խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայրում նոր թաղամասի կառուցման շինարարական աշխատանքները մեկնարկել են 2021 թվականի ապրիլի 26-ին: Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 1,2 մլրդ ՀՀ դրամ: Աշխատանքներն իրականացվում են՝ համաձայն կապալի պայմանագրի եւ բյուջետային հատկացումների: Նախատեսվում է թաղամասը շահագործման հանձնել 2022 թվականի չորրորդ եռամսյակում:

ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ Է

ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՀԻՄՔԵՐ ԿԴՐՎԵՆ

Հանրային քննարկման են ներկայացվել «Սոցիալական աջակցության մասին» եւ հարակից օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին նախագծերը: Այս օրենսդրական փոփոխությունների միջոցով օրենքների մակարդակում հիմքեր կդրվեն հետեւյալ նպատակներն իրականացնելու համար՝

-սոցիալական աջակցության ոլորտում հիմնական սոցիալական ծառայությունների տեսակների ընդայնում,

-հիրատապ արձագանքին պատրաստ եւ առավել ճկուն սոցիալական աջակցության մեխանիզմների հնարավորություն,

-սոցիալական աջակցության հասցեականության եւ արդյունավետության բարձրացում,

-սոցիալական ծառայությունների որակի չափորոշիչների եւ տրամադրող անձնակազմի մասնագիտական կարողությունների նշաձողերի սահմանում,

-սոցիալական աջակցության ոլորտում մինչ օրս արձանագրված այլ խնդիրների լուծում:

Այս նպատակներով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի նոր խմբագրված տարբերակում՝

-հստակեցվել է օրենքի առարկան. մի շարք հիմնարար հասկացություններ վերասահմանվել են՝ միջազգային ընդունված տերմինաբանությանը համահունչ,

-վերանայվել են սոցիալական աջակցության ոլորտի դերակատարների լիազորությունները,

-սահմանվել են սոցիալական ծառայությունների նոր հիմնական տեսակներ (ընտանիքի կենսապահովման կայունացման օգնություն, բնակարանային կոմունալ ծառայությունների վճարումների նվազեցում կամ փոխհատուցում, սոցիալական պատրոնաժ եւ այլն), ինչպես նաեւ գործող տեսակներն ընդլայնվել են (բնաիրային եւ կենցաղային օգնություն, կացարանով ապահովում, սոցիալ-վերականգնողական օգնություն եւ այլն),

-սոցիալական աջակցության ծառայությունների համար որպես նոր մեխանիզմ սահմանվել է աջակցության քարտի տրամադրման հնարավորությունը,

-սահմանվել են սոցիալական աջակցության ոլորտի առանձին ծառայությունների որակի չափորոշիչներ սահմանելու, դրանց մոնիթորինգի, գնահատման եւ վերահսկման լիազորությունները,

-բարելավվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման կառավարման համակարգը,

-սահմանվել են սոցիալական աշխատողների հիմնական գործառույթները, վերանայվել են նրանց իրավունքները եւ պարտականությունները, սահմանվել է մասնագիտական կանոնագրքի մշակման պահանջ, ինչպես նաեւ մասնագիտական նշաձողի պահանջ հավաստագրման միջոցով:

Նախագծերը մշակվել են քաղաքացիների կենսամակարդակի եւ սոցիալական վիճակի բարելավման եւ մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարձրացման նպատակով եւ ի կատարումն ՀՀ կառավարության 2021թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշման N 1 հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» 8.1-ին կետի, համաձայն որի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ պետք է ներկայացվեն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծեր:

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող հիմնական օրենքը «Սոցիալական աջակցության մասին» օրենքն է, որն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական աջակցության ոլորտում տեղի են ունեցել պետական մակարդակում մի շարք կառուցվածքային, գործառութային փոփոխություններ («Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97 օրենքի, Կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն որոշման, Վարչապետի 2021 թվականի փետրվարի 26-ի N 172-L որոշման հիման վրա՝ սոցիալական պաշտպանության հիմնական 4 ոլորտների գործառույթները 2021 թվականի ապրիլի 1-ից իրականացնում է մեկ մարմին՝ Միասնական սոցիալական ծառայությունը՝ իր ստորաբաժանումների միջոցով), բացի այդ, առկա են ոլորտներ, որոնք ենթակա են օրենսդրական կարգավորման (օրինակ, հրատապ արձագանք պահանջող իրավիճակների հետ կապված իրավահարաբերություններ եւ այլն) կամ վերանայման կամ զարգացման (օրինակ, սոցիալական աշխատանքի ոլորտը եւ այլն), անհրաժեշտություն է առաջացել մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ հիմք ընդունելով սոցիալական աջակցության ոլորտում առկա խնդիրները, բացերը, նախատեսվող բարեփոխումները եւ Հայաստանի Հանրապետության կառավարության առջեւ դրված խնդիրներն ու նպատակները՝ ներառյալ միջազգային ստանդարտներն ու պարտավորությունները:

Հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների ծավալը՝ առավել նպատակահարմար է համարվել ոչ թե լրացումներ եւ փոփոխություններ կատարել «Սոցիալական աջակցության մասին» օրենքում, այլ գործողը ճանաչել ուժը կորցրած եւ ընդունել նոր օրենք: Օրենսդրության ներդաշնակությունն ու համահունչությունն ապահովելու նպատակով զուգահեռաբար համապատասխանեցման փոփոխություններ եւ լրացումներ են կատարվում նաեւ այլ՝ հարակից օրենքներում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝

- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Օգոստոսի 23-ի փողոց, 58/1 հասցեում գտնվող 955,5 ք.մ. խանութ եւ սրճարան եւ 0,04513 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 326200000 ՀՀ դրամ:

Գույքը հանդիսանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա եւ զբաղեցված է գրավատուների կողմից: ՀՀ քաղ. օր-ի 272-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գույքի իրացումից հետո նոր սեփականատիրոջ պահանջով գրավատուն պարտավոր է մեկ ամսում ազատել գույքը:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.09.2022թ.-ին եւ 12.09.2022թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝30.12.2022թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.akson.am, www.llcbst.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԽԱՌՆՎԱԾՔ

ԵՐԱՋԵՑ ԵՎ ԴԱՐՁԱՎ. ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանում կասկադյորական արվեստի հիմնադիր, կասկադյոր, հնարքների միակ բեմադրողը Հայաստանում եւ դերասան Արմեն Պետրոսյանը հայ կինոյի պատմության մեջ առաջին անգամ հիմնել է կասկադյորական արվեստը եւ Հայաստանի կասկադյորների ազգային ասոցիացիան:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մեր զրուցակիցը պատմել է արտասովոր մասնագիտության գաղտնիքների եւ առաջիկա նորությունների մասին:

-Պարոն Պետրոսյան, Դուք դեռ առաջին դասարանում, հիացած Էդմոն Քյոսայանի «Անորսալի վրիժառները» ֆիլմում գործող կասկադյորներով, երազեցիք, որ պետք է դառնաք նրանց նման եւ դարձաք: Հետաքրքիր է՝ ովքեր են կազմակերպության անդամները:

-Առաջինը նրանք իմ թեւերն են, սովորական մարդիկ՝ օժտված բոլոր մարդկային հատկություններով եւ մասնագիտություններով՝ բժիշկ, քանդակագործ, մարզիկ, զինվորական: Մարդիկ, որոնք իրենց խառնվածքով նման չեն շատերին:

-Ինչպիսի՞ն է հայ կինոյի ներկայիս վիճակը, եւ ինչքանո՞վ է Ձեր մասնագիտությունը առնչվում ներկայիս հայկական կինոմատոգրաֆիայի հետ:

-Նախ ասեմ, որ մեր մասնագիտությունը չի սկսվում եւ չի ավարտվում կինոյով : Մենք մասնակցում ենք թե՛ կինոյի, թե՛ գովազդային, երաժշտական տեսարաններում, կենդանի ցուցադրական եւ տարբեր հեռուստանախագծերին: Կարելի է ասել, որ այսօր կինոն Հայաստանում դրված է ոչ ճիշտ ռելսերի վրա. դրա ապացույցը քիչ նկարահանվող ֆիլմերն են: Իհարկե, կան նվիրյալներ, որոնք, անկախ ամեն ինչից, նկարահանում են, եւ ասեմ, որ լավ ֆիլմեր են: Եթե որեւէ ֆիլմում կան հնարքների տեսարաններ, իհարկե, մենք մասնակցում ենք: Մենք աշխատում ենք նաեւ Հայաստանում նկարահանվող արտերկրյա նախագծերում:

-Ձեր արվեստն ու քաղաքականությո՞ւնը...

-Մենք աշխատում ենք չկապել մեկը մյուսի հետ՝ չնայած նրան, որ ցանկացած ոլորտ ինչ-ինչ հանգամանքներով կապված է տվյալ ժամանակաշրջանի քաղաքական կյանքի հետ: Չեմ սիրում խոսել քաղաքականության մասին, բայց, ամեն դեպքում, հուսանք, որ ամեն ինչ լավ կլինի:

-Ինչպե՞ս եք կարողանում համատեղել կասկադյորական կյանքն ու ընտանիքը:

-Կասկադյորական աշխարհն ինքնին արդեն ընտանիք է, մեծ ընտանիք: Իմ ընտանիքում բոլորն ըմբռնումով են մոտենում իմ մասնագիտությանն ու ներաշխարհին: Չի կարող ամեն բան լինել հարթ, երբ հանուն ընտրած կյանքի կամ ընտանիքի համար ինչ-որ բաներ զոհաբերում ես՝ գողանալով մեկից տալով մյուսին. պետք է հավասար տանել այդ զուգահեռները: Որդիներս դեռ փոքր էին, որոշել էին դառնալ կասկադյոր, խոստացել էի օգնել, բայց վերջերս մտափոխվեցին, որոշեցին դառնալ դատավոր եւ դատապաշտպան. ընդունում եմ եւ չեմ հակաճառում: Հույս ունեմ, որ, ամեն դեպքում, պտուղը ծառից հեռու չի ընկնի:

-Պարոն Պետրոսյան, ի՞նչ տվեց Ձեր ընտրած մասնագիտությունը Ձեր կայացմանը:

-Այս մասնագիտությունը համարվում է աշխարհի ամենավտանգավոր մասնագիտությունը, որն առանց վնասվածքների չի լինում: Դա պրոֆեսիոնալիզմի պակասի խնդիր չէ, դրա մասին կարելի է օրերով խոսել, պետք է ապրել այդ կյանքով, եւ ամեն ինչ պարզ կլինի: Խոսքերով պարզապես հնարավոր չէ ներկայացնել, ցանկացած վնասվածք եւ կազդուրում յուրովի վերանայումն է կատարված, չկատարված աշխատանքների, ճշտի եւ սխալների, չնայած որ 28 տարվա գործունեության ընթացքում մենք չենք ունեցել լուրջ վնասվածքներ: Կարծում եմ՝ դա է պրոֆեսիոնալիզմը: Իսկ ինչ վերաբերում է իմ կայացմանը, ապա ամենակարեւոր հատկանիշներն են ազնվությունը, կարգապահությունը, պատասխանատվությունն ու գիտելիքը: Մեր մասնագիտության մեջ թափթփվածությունը, անպատասխանատվությունը, սուտն ու տգիտությունը կբերի լավագույն դեպքում հաշմանդամության:

-Մենք գիտենք, որ Դուք աշխատել եք ավելի քան 75 տարբեր նախագծերում: Որո՞նք են վերջին շրջանում կատարած Ձեր աշխատանքները:

-Եզրափակող մեկ տարվա ընթացքում աշխատել ենք հնդկական «Օմ», հայկական «Կոռուպցիա 2» եւ «Օ Թ.Թ.Կ» գեղարվեստական ֆիլմերում եւ մեկ գովազդային տեսահոլովակում: Շուտով կսկսենք աշխատանքները արտերկրյա պատմական, դոկումենտալ-խաղարկային եւ, արտերկրյա գործընկերների աջակցությամբ, ռեժիսոր Հովհաննես Գալստյանի ֆիլմում:

-Իսկ Հայաստանում կա՞ արդյոք կասկադյորական դպրոց:

-Կասկադյորական պրոֆեսիոնալ դպրոցը Հայաստանում մոտական 50 տարում անհնար է պատկերացնել, քանզի կապված է շատ մեծ ֆինանսների հետ, սակայն մեր կազմակերպությունում անցկացնում ենք դասընթացներ՝ ընդգրկված տարբեր առարկաներով, կապված մեր մասնագիտության հետ: Ուսանողները հանձնում են քննություններ, որից հետո սկսում է ամենագլխավոր փուլը նկարահանման հրապարակում: Սուրը կռում են դարբնոցում, սակայն նա իրեն դրսեւորում է մարտում: Ես նաեւ դասավանդել եմ Կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտում՝ բեմական շարժման ամբիոնում ուսանողներիս տալով նախնական կասկադյորական գիտելիքներ եւ հմտություններ:

-Մենք գիտենք, որ Դուք Հայաստանում միակ պրոֆեսիոնալ հնարքների բեմադրողն եք եւ չունեք դերասանական կրթություն, սակայն բազմաթիվ ֆիլմերում հանդես եք եկել դերասանական խաղով, անգամ՝ գլխավոր դերում: Ի՞նչ է կինոն Ձեզ համար:

-Այո՛, ես միշտ ասել եմ՝ դերասան չեմ, չնայած բոլոր իմ ռեժիսոր ընկերները հակադարձում են ինձ: Երեւի թե ստացվում է: Իսկ թե ինչ է կինոն, ես չեմ կարող այդ մասին այսպես խոսել: Մեկ օր երեւի հիշողություններիս գրքում կգրեմ դրա մասին, բայց դա շուտ չի լինի:

-Եվ վերջում՝ ո՞վ է Արմեն Պետրոսյանը:

-Ես էլ մեկ օր այդ հարցրեցի նրան, ասաց, որ ինքն էլ իրենից գլուխ չի հանում:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

«ԱՄԵՐԻԿԱՑԻ ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՆԵՐԸ»

ՖԻԼՄԸ ՀԱՊԹԱՆԱԿ Է ԱՐՁԱՆԱԳՐԵԼ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ Հայաստանի ազգային կինոկենտրոնի ֆինանսավորմամբ «Ամերիկացի բարի սամարացիները» ֆիլմը հաղթող է ճանաչվել ամերիկյան «Վավերագրական ֆիլմեր՝

առանց սահմանների» («Docs Without Borders International Film Festival») միջազգային կինոփառատոնում:

Ինչպես հայտնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, ֆիլմն արժանացել է նաեւ «Բացառիկ արժանիքների համար» («EXCELLENCE») մրցանակի:

Ֆիլմի ռեժիսորն է Արա Մնացականյանը, սցենարիստը՝ Ամբեր Կարլինսը (ԱՄՆ), պրոդյուսերը՝ Մանվել Սարիբեկյանը, օպերատորը՝ Աշոտ Մկրտչյանը, իսկ արտադրողը՝ «Ման փիքչերս փրոդաքշեն» ընկերությունը:

Ֆիլմը նվիրված է ազգերի փրկության նվիրյալների հիշատակին՝ մարդկանց, որոնք իսպառ ոչնչացումից փրկեցին քրիստոնյա ժողովուրդների զավակներին:

«Վավերագրական ֆիլմեր՝ առանց սահմանների» փառատոնը բացառապես վավերագրական կինոյի եւ վավերագրական դրամայի փառատոն է:

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Հայաստանը ներկայացնող շախմատիստները սկսել են պայքարը Եվրոպայի կանանց անհատական առաջնությունում: Չեխիայի մայրաքաղաք Պրահայում ընթացող Եվրոպայի անհատական առաջնությունում մինչ այս լավագույն արդյունքը գրանցել է Էլինա Դանիելյանը, որը երեք տուրում էլ հաղթել է: Նման արդյունք են գրանցել եւս 4 երկրի ներկայացուցիչներ: Լիլիթ Մկրտչյանը 2,5 միավոր ունի եւ միայն կես միավորով է զիջում առաջատարներին: Եվրոպայի անհատական առաջնությունում հանդես են գալիս նաեւ Աննա Սարգսյանը, Մարիամ Մկրտչյանը, Սուսաննա Գաբոյանը եւ Մարիա Գեւորգյանը:

ՏԱՌԱՊՈՒՄ Է ԴԻՍՄՈՐՖՈՖՈԲԻԱՅՈՎ

Ռուս բանաստեղծուհի Վերա Պոլոզկովան խոստովանել է, որ արդեն մի քանի տարի տառապում է դիսմորֆոֆոբիայով, որն ուղեկցվում է արտաքին տեսքի համառ մերժմամբ: Պոլոզկովան պատմել է, որ ինքը մի քանի տարի ապրում է այդ խանգարմամբ: Նա պարզաբանել է, որ ողջ հասակով երբեք չի նկարվում: Կինն իրեն կտրում է երեխաների հետ բոլոր լուսանկարներից եւ հինգ վայրկյանից ավել իր մասնակցությամբ տեսանյութեր չի դիտում: «Վերջին հինգ տարիների ընթացքում այնքան բան է տեղի ունեցել, որ ես դադարել եմ ինքս ինձ նայել: Ես սա չեմ անում հանուն՝ «այո, քեզ մոտ ամեն ինչ լավ է, հանգստացի՛ր»-ի: Ես դա անում եմ, որպեսզի գոնե փորձեմ դադարել ջնջել ինձ ամեն տեղից», - գրել է նա:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը» 94 միլիոն եվրո կառաջարկի Նիդեռլանդների չեմպիոն Ամստերդամի «Այաքսի» 22-ամյա բրազիլացի հարձակվող Անտոնիի համար: Մանչեսթերյան ակումբը տրանսֆերի համար բանակցությունները սկսել էր 60 միլիոն եվրոյի առաջարկից, սակայն «Այաքսը» պահանջել էր 100 միլիոն եվրո:

«Մանչեսթեր Յունայթեդն» արդեն համաձայնության է հասել Անտոնիի հետ: Անտոնիի պայմանագիրն «Այաքսի» հետ նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս: Անցած մրցաշրջանում Անտոնին «Այաքսի» հետ մասնակցել է 33 հանդիպման, խփել 12 գոլ, կատարել 10 գոլային փոխանցում:

120 ԳՈԼ

Անգլիայի առաջնության երրորդ տուրում «Մանչեսթեր Յունայթեդին» խփած գոլի շնորհիվ եգիպտացի հարձակվող Մոհամեդ Սալահը հավասարվեց ֆուտբոլիստի կարիերան ավարտած անգլիացի Սթիվեն Ջերարդին «Լիվերպուլում» խփած գոլերի քանակով Պրեմիեր լիգայում: Երկուսն էլ խփել են 120 գոլ Անգլիայի առաջնությունում: «Լիվերպուլը» «Օլդ Տրաֆորդում» «Մանչեսթեր Յունայթեդին» պարտվել էր 1:2 հաշվով: Ջերարդը «Լիվերպուլում» հանդես է եկել 1998-2015 թվականներին: Սալահը գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմի խաղացող է 2017-ից:

● *Օգոստոսի 25-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

Սերինե Գալստյան (22 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կարո՞ղ է գնված ապրանքը վերադարձվել կամ փոխարինվել:

Գարիկ Խաչատրյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սպառողն իրավունք ունի վերադարձնելու կամ փոխարինելու պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը այլ չափի, ձեւի, գույնի կամ համանման կոմպլեկտայնության ապրանքով այն վաճառողի մոտ, որից ձեռք է բերել ապրանքը, կամ վաճառողի կողմից հայտարարված այլ վայրում, եթե նշված ապրանքը հարմար չէ ձեւով, եզրաչափքերով, գույնով, չափով կամ այլ պատճառներով չի կարող օգտագործվել սպառողի կողմից իր նշանակությամբ՝ գնի տարբերության դեպքում անհրաժեշտ վերահաշվարկ կատարելով վաճառողի հետ:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սպառողն իրավունք ունի փոխարինելու կամ վերադարձնելու պատշաճ որակի ապրանքն իրեն հանձնելու օրվանից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել: Պատշաճ որակի ապրանքը վերադարձնելու ժամկետը համարվում է պահպանված, եթե սպառողն ապրանքն ստանալու օրվանից 14-օրյա ժամկետում այն հանձնել է փոստային, սուրհանդակային, տրանսպորտային կամ առաքման այլ ծառայության:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Քաղաքացիները երեխաների համար նախատեսված պետքական խաղալիքները եւ հագուստները դրել են աղբամանների կողքը, որպեսզի անօթեւան երեխաները կարողանան օգտագործել իրերը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.08.2022**
Հասցեն՝ Զեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: